

ԵՐԱԿՐՈՆԵԱ ՄԱՍԿՐԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Մարտի 20-ին

Վերապատրաստման դասընթացներին մասնակից եկեղեցականներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց վերապատրաստման դասընթացներին մասնակից՝ Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից ժամանած եկեղեցականներին:

Կակից մարտահրավերների պայմաններում գիտական մոր ձեռքբերումներով իրենց հոգևոր առաքելությունն իրականացնելու համար: Հայոց Հովվապետը քահանա հայրերին պատգամեց նաև Սուրբ Էջմիածնի խորհրդով զորացած՝ անձնորդի ու եկեղեց



Նորին Սրբությունը, իր հայրական սերն ու օրհնությունը փոխանցելով հոգևոր հայրերին, գոհունակությամբ անդրադարձավ վերապատրաստման դասընթացների արդյունավետությանը: Այս առնչությամբ Հայոց Հայրապետը կարևոր նկատեց հոգևորականների հովվական ու աստվածաբանական գիտելիքների հարստացումը՝ ժամանա-

ցանվեր ծառայությամբ իրենց նպատակը բերել հայրենիքի ու հայ ժողովրդի զավակների առջև ծառացած դժվարությունների հաղթահարմանը:

Համդիպմանը Նորին Սրբությունը պատասխանեց նաև քահանաների հարցերին, որոնք առնչվում էին եկեղեցու կանոնական, ծիսական և հովվական կյանքին:



Մարտի 31-ին

ԵՏՍԿ-ի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի (ԵՏՍԿ) արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ Դիմիտրիս Դիմիտրիադիսի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար, ԵՄ-ի դեսպան Վասիլիս Մարագուիս:

Դիմիտրիս Դիմիտրիադիսը, ընդունելության համար շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը, անդրադարձավ կոմիտեի ծրագրերին, ինչպես նաև Հայաստանի հետ տնտեսական և սոցիալական երկխոսության խթանման հեռանկարներին:

Հանդիպմանը Ամենայն Հայոց Հայրապետը ողջունեց տնտեսական կայունության, սոցիալական արդարության և իրավունքների պաշտպանության գործում ԵՏՍԿ-ի կողմից ներդրվող ջանքերը՝ մասնավոր անդրադարձ կատարելով բռնի տեղահանված արցախահայերի հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությանը: Զրույցի ընթացքում Հայոց Հայրապետն իր մտահոգությունն ար-



Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցվեց «Մոսկվայի Միտրոպոլիտ Սուրբ Ալեքսի» առաջին կարգի շքանշանը

Մարտի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնվեց «Մոսկվայի Միտրոպոլիտ Սուրբ Ալեքսի» առաջին կարգի շքանշանը՝ շնորհված Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Կիրիլ Ա-ի կողմից Հայոց Հայրապետի գահակալության 25-րդ տարեդարձի կապակցությամբ՝ ի գնահատություն երկու եկեղեցիների հարաբերությունների զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի:

Այս առիթով Մայր Աթոռ էր ժամանել Ռուս Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Մոսկվայի Պատրիարքության արտաքին եկեղեցական կապերի բաժնի նախագահ, Վոլոկոլամսկի միտրոպոլիտ Անտոնին:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, ՀՀ-ում ՌԴ-ի արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը, հասարակական ու մշակութային գործիչներ:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի վանական խորհրդի ատենապետ Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը:

Այնուհետև Մոսկվայի Պատրիարքության արտաքին եկեղեցական կապերի բաժնի նախագահ, Վոլոկոլամսկի միտրոպոլիտ Անտոնին հրապարակեց Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքի շնորհավորական ուղերձը:

«Արդի համաշխարհային մարտահրավերներին համդիման Մեր եկեղեցիներին շաղկապում են քրիստոնեական համերաշխությունը, փոխադարձ գորակցությունն ու գործակցությունը ավետարանական անանց գաղափարների պաշտպանության գործում: Բարձրորեն գնահատում ենք Ձեր մշտական բարի վերաբերմունքը Ռուս Ուղղափառ Եկեղեցու և ռուսական հոգևոր ավանդության

նկատմամբ», - մասնավորապես ասվում է ուղերձում:

«Մոսկվայի Միտրոպոլիտ Սուրբ Ալեքսի» շքանշանի հանձնումից հետո իր օրհնության խոսքը ներկաներին բերեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հայոց Հովվապետն ընդգծեց, որ խորապես զգացված է իր հոգևոր եղբոր՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի ուշադրության ու ջերմ վերաբերմունքի համար, ինչն արտահայտությունն է երկու եկեղեցիների բազմադարյա գործակցության և սերտ հարաբերությունների, բազմամյա եղբայրական շփումների, այլև ՌԴ-ի պետական, հասարակական ու մշակութային կյանքում հայ համայնքի կարևոր ներդրումի:

Նորին Սրբությունը հաստատեց նաև, որ այդ կապերի ակունքներում հավատակից երկու ժողովուրդների պատմական առնչակցություններն են ու դարերով կոփված եղբայրությունը, որը շարունակաբար պետք է զորացվի ու ամրապնդվի նաև երկու եկեղեցիների համատեղ ջանքերով:

«Աշխարհաքաղաքական բարդ զարգացումներով փոթորկված է համայն աշխարհը, նաև մեր երկրների ու ժողովուրդների կյանքը: Վերջին տարիներին ծանր փորձությունների ու կորուստների միջով անցավ մեր ժողովուրդը: Տակավին հաղթահարված չեն Արցախի դեմ Ադրբեյջանի սանձազերծած պատերազմի պատճառած հետևանքները: Մենք շնորհակալ ենք Նորին Սրբությանը և Ռուս Եկեղեցուն աղետալի պատերազմի օրերին հայ ժողովրդին ցուցաբերած զորակցության և մատուցված աղոթքների համար: Երախտապարտ ենք Դադիվանքի անխափան գործունեության և մեր միաբանների անվտանգության ապահովման ուղղությամբ Կիրիլ Պատրիարքի գործադրած ջանքերի համար: ➔ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցվեց «Մոսկվայի Միտրոպոլիտ Սուրբ Ալեքսի» առաջին կարգի շքանշանը



← էջ 1

Վատահ ենք, որ Ռուս եկեղեցին և ՌԴ-ի իշխանությունները կշարունակեն կարելի միջոցները գործադրել Արցախի հայկական հոգևոր ժառանգության պահպանության, արցախահայության հարազատ բնօրրան վերադարձի և Բաքվում գերության մեջ գտնվող, այս օրերին շինծու դատավարության և անարդարության ենթարկվող Արցախի քաղաքական ղեկավարության, զինվորականների և քաղաքացիական անձանց ազատ արձակման ուղղությամբ», — մշտեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը հավելեց, որ այս բարոյ ժամանակներում ծանր ապրումների ու մտահոգությունների մեջ է եղել նաև Կիրիլ Պատրիարքը՝ պայմանավորված պատմական ամենասերտ կապերով միմյանց հետ շաղկապված Ռուսաստանի և Ուկրաինայի եղբայր ժողովուրդների, իր հավատավոր զավակների հականարտույթյամբ և վերջինիս հետևանքով Ուկրաինա եկեղեցու անդաստանում հառնած լրջագույն հիմնախնդիրներով:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքի կենաց արևշատության, արգասավոր զահակալության և Ռուս Ուղղափառ եկեղեցու պայծառության համար: Նորին Սրբությունը մաղթեց նաև, որ Ամենողորմ Տերը զորավիգ լինի երկու ժողովուրդներին՝ պահելով ամուր իրենց հավատի ու ապագայի նկատմամբ լավատեսության մեջ, և պարզև խաղաղություն, ապահովություն ու բարօրություն:

Հանդիսությունն ամփոփվեց «Էջ Միածինն ի Հորե» շարականի կատարմամբ և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

Տ. Վազգեն արք. Միրզախանյանը նշանակվել է Բալթյան երկրների հայոց թեմի առաջնորդ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Տ. Վազգեն արք. Միրզախանյանը, ազատվելով Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրենի պարտականություններից, սույն թվականի մարտի 25-ից նշանակվել է Բալթյան երկրների հայոց թեմի առաջնորդ:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Տ. Հակոբ քնն. խաչատրյանը, սույն թվականի մարտի 15-ից ազատվելով Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում ստանձնած հոգևոր պարտականություններից, ծա-

ռայության է կոչվել Արարատյան հայրապետական թեմում, իսկ Տ. Հովհաննես քնն. Քեսաբյանը մայիսի 1-ից, ազատվելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետությունում ստանձնած պարտականություններից, ծառայության է նշանակվել Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:

Տ. Վազգեն քնն. Անդրեասյանը և Տ. Վարդան քնն. Հայրապետյանը մարտի 14-ից ծառայության են կոչվել ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմում:

Կարգալույծ է հռչակվել

Մարտի 17-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Արմեն քնն. Մելքոնյանը:

Տնօրենության համար հիմք են ծառայել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Խաժակ արք. Պար-

սամյանի, Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տաթև եպս. Հակոբյանի միջնորդագրերը, ինչպես նաև Պարզևների շնորհման և կարգապահական հարցերի հանձնախմբի եզրակացությունը՝ Արմեն քահանայի կարգազանց ընթացքի ու հակակամական գործողությունների վերաբերյալ:

Կարգալույծ է եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Սարգիս Մելքոնյան ավագանի անունով:

Լուրեր թեմերից

ՀԱՆ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոսը պարզևատրվել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը ՀԱՆ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոսին պարզևատրել է Ալեքսանդր Նևսկու շքանշանով: Հրամանագրում պարզևատրման հիմք է նշվում արքեպիսկոպոսի մեծ ավանդը ՌԴ նախագահին առընթեր կրոնական միավորումների հետ փոխգործակցության խորհրդի գործունեության ապահովման ուղղվածությամբ:



Հոգևոր առաջնորդը նամակ է հղել Մեծ Բրիտանիայի վարչապետին

Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Հովակիմ եպս. Մանուկյանը նամակ է հղել Մեծ Բրիտանիայի վարչապետ Սեր Քիր Սթարմերին՝ Ադրբեջանում բանտարկված հայ գերիների խնդրով: Նրան աջակցել է ութ այլ եկեղեցական առաջնորդ:

Նամակում մանրամասնորեն ներկայացվում է, որ 2023 թ. բռնի տեղահանումից հետո Ադրբեջանը կամայականորեն բանտարկել է 23 հայ պետական պաշտոնյայի և քաղաքացիական անձի՝ ներկայացնելով շինծու մեղադրանքներ: Հոգևոր հայրերը կոչ են արել վարչապետ Սթարմերին՝ վճռականորեն հորդորելու Ադրբեջանին՝ կատարելու իր միջազգային պարտավորությունները և ազատ արձակելու բանտարկյալ հայերին:



Սոցիալական ցանցերը քրիստոնյայի կյանքում

21-րդ դար՝ ժամանակաշրջան, որի մասին դարեր շարունակ երազել են մարդկության պատմության մեծագույն մտածողներից, գիտնականներից շատերը: Գիտատեխնիկական առաջընթացը մեր աչքերի առջև տեղի է ունենում ոչ թե տարիների, այլ շաբաթների ու օրերի ընթացքում: Մենք բառացիորեն ակամատես ենք մարդկային մտքի ու տեխնիկական հնարավորությունների բեկումնային վերելքի: Եվ միայն դա չէ՝ զարմանալի, այլ նաև այն, որ մեզանից զրեթե յուրաքանչյուրը հնարավորություն ունի անմիջապես հաղորդակից լինելու այդ առաջընթացի պտուղներին: Դրա համար անհրաժեշտ է շատ քիչ բան՝ հեռախոս և հասա-

նելիություն համացանցին: Մի քանի քառակուսի սանտիմետրանոց սև էկրանը մեզ վայրկյանապես հասանելիություն է տալիս ցանկացած տեղեկատվության, աշխարհում տեղի ունեցող ցանկացած իրադարձության:

Սակայն կա ևս մի կարևոր գործոն՝ կապված համացանցային իրականության հետ: Բացի տեղեկատվական հասանելիությունից՝ այն կատարում է մեկ այլ՝ հավանաբար ավելի նշանակալի գործառնություն, որն է՝ մարդկանց միջև հեռավորությունների ու պատմեղների փշրումը: Այո, սոցիալական ցանցերը, որոնցից զրեթե բոլորս այս կամ այն չափով օգտվում ենք, տալիս են նախկինում անպատ-

կերացնելի հնարավորություններ միջանձնային հաղորդակցությունների ու շփումների հարցում: Ցանկացած պահի, ցանկացած վայրում մենք կարող ենք զրուցել մեր ընտանիքի անդամների հետ, տեսնել, թե որտեղ են նրանք գտնվում, քննարկումներ ծավալել ընկերական զրուցարաններում ու խմբերում, հեռավար ստանալ կրթություն, տանը նստած՝ աշխատել աշխարհի ցանկացած կետում գտնվող կազմակերպության համար, ծանոթանալ նոր մարդկանց հետ և ստեղծել հարաբերություններ: Հենց այդ երևույթն էլ մենք կփորձենք հոգևոր-քրիստոնեական հարթության վրա դիտարկել:

Անկարելի է, որ մեզան կարգի մտավոր ու սոցիալական տեղաշարժերը քրիստոնեության, եկեղեցու և անհատ քրիստոնյայի կյանքում առանձին ուշադրության արժանի չլինեն: Չէ՞ որ քրիստոնյան վակուումում գտնվող օրգանիզմ չէ, այլ՝ հասարակության լիարժեք անդամ, ինչպես և եկեղեցին աշխարհից կտրված, աշխարհի իրողություններին անհաղորդ կառույց չէ, այլ՝ այդ աշխարհի հետ զարգացող, նրա մարտահրավերներին արձագանքող և նրա համար կարևորագույն ներդրում ունեցող մարդկանց հսկայական համայնք:

Իսկ հոգևոր տեսանկյունից ամեն ինչ այնքան էլ լուսավոր չէ, քան թվում է: Ավելի ճիշտ կլի-

նի ասել՝ տեխնոլոգիական առաջընթացը, մասնավորապես՝ սոցիալական ցանցերի սրընթաց տարածումը, հոգևոր կյանքում բովանդակային առումով նորություն չի բերել, ուղղակի ավելի է խտացրել ու շրջափելի դարձրել այն մարտահրավերները, որոնք միշտ եղել են քրիստոնյայի հոգևոր կյանքում: Տեխնոլոգիական առաջընթացը մեծացրել է մարդկանց՝ հնարավորությունները՝ ազատորեն գործելու ըստ սեփական հայեցողության: Ինքնին դա բացասական երևույթ չէ, սակայն գործնականում առաջ է քաշում մի շարք խնդիրներ, որոնց քրիստոնյան պետք է ուշադրություն դարձնի: ➔ էջ 4, 8

Սոցիալական ցանցերը քրիստոնյայի կյանքում

← էջ 2

Բազմաթիվ մարտահրավերներին ցանցերը կառավարողներին հետևյալը.

- միջամենային հաղորդակցության մակարդակ,
- ամենակամ կյանքի չափազանց տեսանկյուն,
- կյանքի մասին իդեալականացված պատկերացումների աճ,
- սեփական ժամանակի ոչ արդյունավետ օգտագործում:

Այս բոլորը միմյանց հետ փոխկապակցված մարդկային երևույթներ են, որոնք, անշուշտ, գոյություն են ունեցել նաև, երբ չկային ոչ հեռահաղորդակցման միջոցներ, ոչ համացանցային տիրույթ առավել ևս: Սակայն «վիրտուալ իրականությունում» արդեն իսկ գոյություն ունեցող երևույթներն առավել սուր և արտահայտիչ կերպով են հանդես գալիս, ինչը կարիք է առաջացնում հոգևոր տեսանկյունից դրանք նորոգել քննելու, ինչպես նաև փորձելու հենց «վիրտուալ իրականության» համար նոր ու տարբերվող՝ քրիստոնեական վերաբերմունք ու փորձառություն առաջարկելու:

Ըստ վերոնշյալ կետերից առաջինի՝ սոցիալական ցանցերը, որ առաջին հայացքից նպատակ ունեն կամուրջ դառնալու մարդկանց միջև, հաճախ խորացնում են միջամենային տարածությունները: Պատճառն այն է, որ սոցիալական ցանցերը տալիս են հնարավորություն՝ հաղորդակցվելու առավելագույն չափով մարդկանց հետ՝ *նվազագույն* զգա-

ցական տարրով: Օրինակ՝ եթե ես ունեմ «ընկերներ» Facebook սոցիալական ցանցում, ամեն օր տեսնում եմ, թե նրանք ինչ են գրում, ինչ լուսանկարներ են հրապարակում, որտեղ են գտնվում, ում հետ են շփվում և այլն: Քանի որ ես արդեն իսկ բավականաչափ տեղեկացվածություն ունեմ այդ մի քանի հարյուր մարդկանց առօրյայի վերաբերյալ (և ընդհակառակը), ես արդեն սկսում եմ նրանց հաղորդագրություններ քննել, չգնահատել, իսկ ամենամոտ ընկերներին, որոնց հետ պարբերաբար հանդիպում էի, սկսում եմ շատ ավելի ուշ-ուշ տեսակցել: Սոցցանցերի տված թվային տեղեկացվածությունն ընկերների մասին կարծես գալիս է փոխարինելու այն շփմանը և «հարցուփորձին», որ հարազատ մարդիկ ունենում են միմյանց հանդեպ հետաքրքրված ու մտահոգ լինելուց դրված: Այսպիսով՝ մենք վտանգում ենք առավել թանկ, զգացմունքներով ու կապվածությամբ լի շփումը՝ կենդանի շփումը: Առցանց տիրույթը դարձել է և՛ նոր ծանոթություններ ստեղծելու, և՛ արդեն իսկ գոյություն ունեցող ավելի խոր ծանոթությունները նույն՝ առցանց տիրույթ տեղափոխելու գործիք:

Երկրորդ մարտահրավերն անմիջապես բխում է առաջինից: Երբ միջամենային հաղորդակցություններն աստիճանաբար տեղափոխվում են համացանց, բնականորեն մեր անձական տվյալները, մեր լուսանկարները, աշխատանքային գործունեությունը և այլն, նույնպես հայտնվում են համացանցում: Սո-

ցիալական ցանցերում մենք, հաճախ հաշվի չառնելով անձնական տվյալների պաշտպանվածության հարցը, դրսևորում ենք չափազանց բարձր տեսանելիություն՝ դրանով փորձելով փոխհատուցել կենդանի միջամենային հաղորդակցության պակասը: Սոցիալական ցանցերը վերածվում են հարթակի, որտեղ մենք մեծ թվով լսարանի կարող ենք ի ցույց դնել մեր կյանքը: Եթե անգամ մի կողմ դնենք տվյալների պաշտպանվածության խնդիրը, ապա հոգևոր տեսանկյունից մենք զայթաղություն կարող է առաջանացնել այս «ի տես բոլորի» իրականությունը: Մենք, կամա թե ակամա, վիրտուալ տիրույթում սկսում ենք համեմատվել տարբեր մարդկանց հետ մեր կենցաղով, մեր զբաղմունքով, անգամ լուսանկարների «հավանումների» քանակով:

Սրա վառ օրինակը տարատեսակ «թրենդային» տեսանյութերն են, որտեղ insatgram-յան օգտատերերը հազարներով կրկնում են նույն գործողությունները, արտահայտում նույն մտքերը՝ միմյանցից հետ չմնալու («թրենդի մեջ մնալու») նպատակով: Այսպիսով՝ արդեն դժվար զատորոշելի է դառնում՝ մարդը սոցցանցերից օգտվում է, որ բարելավի իր կյանքի որակը, թե՛ ձգտում է ակտիվ կյանք վարել, որպեսզի բարելավի իր կարգավիճակը սոցցանցերում: Սա ինչ-որ առումով մի շարք մեղքերի՝ ցուցամոլության, նախանձի, սնափառության դրսևորում է: Այն ճիշտ հակառակն է Պողոս առաքյալի հետևյալ պատգամի. «Սա-

կայն քանի լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղատ. 6:14):

Սոցիալական ցանցերի հսկայական տիրույթն ամեն օր, ամեն ժամ մեզ հրամցնում է հազարավոր մարդկանց կողմից ստեղծված կյանքի չափանիշներ, որոնց մենք ամեն կերպ փորձում ենք համապատասխանել: Սրա հետևանքը լինում է կյանքի մասին իդեալականացված, թյուր պատկերացումների ձևավորումը: Շատերս մեր կյանքից դժգոհում ենք, այն ձանձրալի համարում, քանի որ սոցցանցերում բախվում ենք արհեստական իրականության, որտեղ բոլորը միշտ երջանիկ են, հաջողակ, ունեն սիրող շրջապատ և այլն: Մեզ մատուցված իդեալական օգտահաշիվների հետևանքով մեր ունեցած հաջողությունները, մեր մտերիմների սերը, ամենօրյա աշխատանքը սկսում են խամրել ու արժեզրկվել: Այնինչ Սուրբ Գրքն ուսուցանում է. «Գոհություն հայտնեցեք ամեն ժամ ամեն ինչի համար Հորը և Աստծուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով» (Եփես. 5:20):

Եվ, ի վերջո, սոցիալական ցանցերը դարձել են շատերիս ժամանցի միակ ձևը: Սոցիալական ցանցերից կախվածությունն զգալիորեն ցածրացնում է մարդկանց կյանքի որակը՝ նպաստելով թանկագին ժամանակի վատնմանը և մեծամասամբ հանգեցնելով ծուլության ու աշխատունակության անկման: Ծուլությունը, որ եկեղեցում մահացու մեղքերի թվին է

դասվում, գլուխ է բարձրացնում թվային զբաղվածության սոցցանցերում ակտիվության աճի միջոցով: Իրականում ունենում ենք ոչ արդյունավոր գործունեություն, որի հետևանքները ծանր կարող են ազդել հատկապես երիտասարդների ու դեռահասների ապագա կյանքի վրա:

Վերը թվարկված խնդիրները, որոնք անգամ մեծ մասը չեն այն ամբողջական մարտահրավերների, որ մեզ հրամցնում են սոցցանցերը, կարող են թյուր տպավորություն ստեղծել, թե տեխնոլոգիական առաջընթացի այս ձեռքբերումներն ի հոգևոր մերժելի են, և որ քրիստոնյան պետք է ամեն կերպ խուսափի սոցցանցերից: Սակայն, իհարկե, այդպես չէ: Ամիսածերշտ է հասկանալ, որ սոցցանցերը, ինչպես ցանկացած այլ տեխնոլոգիական միջոց, ընդամենը գործիք են և չեն կարող մեղքի պատճառ լինել: Սոցցանցերը դաշտ են ստեղծում՝ արդեն իսկ գոյություն ունեցող երևույթների առավել կամ պակաս չափով դրսևորման համար:

Իսկ ինչպիսի՞ վերաբերմունք կարող է քրիստոնյան այսօր ցուցաբերել սոցիալական ցանցերի հանդեպ՝ միաժամանակ և՛ օգտվելով դրանց մեծ հնարավորություններից, և՛ չդառնալով դրանցում տարածվող ընդհանուր միտումներից տուժողը: Այդ նպատակով կառանձնացնենք սոցիալական ցանցերի տված այն հնարավորությունները, որոնք թույլ են տալիս հնարավորինս ազատորեն օգտվել դրանցից: ➔ էջ 8

Հայ կերպարվեստի համաշխարհային երևույթը

Մարտիրոս Սարյան — 145

Բարեր, հազարամյակներ ի վեր մարդկության կառուցած գեղեցիկ տաճարում իր առանձին նշխարաբար ունի Մարտիրոս Սարյանը՝ անեցիների շառավղից սերող մի ճյուղ, որ հետո դարձավ ազգային ու համամարդկային արվեստի հաստաբուն կաղնիներից մեկը:

Ծննդավայրն է Նոր Նախիջևանը, ծննդյան տարին ու օրը՝ 1880 թ. փետրվարի 16 (28)-ը: Գեղարվեստի ապագա թագակիրը միտքը կրթում, որպես արվեստի այր՝ թրծվում է տեղի հայ-ռուսական հանրակրթական և Մոսկվայի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարաններում, կատարելագործվում Վ. Սերովի և Կ. Կորովի մի դիմանկարի արվեստանոցում: 1901-ին առաջին անգամ այցելում է հայրենի երկիր՝ Երևան, Աշտարակ, Վաղարշապատ, Սևան, 1902-ին՝ Անի: Այս ճամփորդությունների ընթացքում, ինչպես և հետագա տարիներին, կլանված ուսումնասիրում է իրեն ծնած ժողովրդի պատմությունը, նիստուկացը, մշակույթը, ճարտարապետության, քանդակագործության, որմնակարչության և դեկորատիվ-կիրառական արվեստի կոթողները, ինչը վճռական ազդեցություն է թողնում արվեստագետի աշխարհայացքի և արարչատեղանակի ձևավորման ու զարգացման վրա: Ուսումնառության տարիներին շփվում է ռուս մտավորականության գրեթե ողջ ուսկե միջուկի հետ. այդ շփումներն էական են դառնում Սարյան մտավորականի, քաղաքացու և արվեստագետի ձևավորման առումով:

Չորս տասնամյակից ավելի



Մարտիրոս Սարյան, «Ինքնանկար», 1942 թ.

ձգվող ստեղծագործական կյանքի ընթացքում Սարյանը գեղարվեստի աշխարհը համալրում է պատկերների մի ողջ գանձարույթով՝ բնանկարներ, դիմանկարներ, նատյուրմորտներ, պանոներ, գրքերի ձևավորումներ, բեմանկարներ. նրա համար չկային առաջնային ու ածանցյալ ժանրեր. արվեստի արժեքավոր նշխար երկնելն է մշտապես եղել գլխավոր նպատակալետ: Գեղարվեստի հայրենաշունչ մասունքներ են՝ «Հայաստան. Էտյուդ» (1922), «Հայաստան», «Լեռներ: Հայաստան», «Արևոտ բնանկար», «Արարատ լեռան տեսարանը Երևանից» (1923), «Արագած» (1925), «Գեղամյան լեռներ» (1926), «Աշնանային մառախուղապատ օր» (1928), «Երևանյան բակ գարնանը» (1928), «Հին Երևանը» (1928), «Գարնանային օր» (1929), «Ձանգվի փիղ» (1930), «Չորավոր» (1945), «Բջիհ. Ամրոց (1946), «Աշտարակ. Կարմրավոր

եկեղեցին» (1956), «Ծաղիկներ» (1945), «Աշնանային ծաղիկներ և մրգեր» (1939), «Մայիսյան ծաղիկներ» (1946), «Աշնանային նատյուրմորտ» (1963), «Բանաստեղծ Ալեքսանդր Շատուրյանի դիմանկարը» (1915), «Եղիշե Չարենցի դիմանկարը» (1923), «Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի դիմանկարը» (1933), «Ճարտարապետ Թորոս Թորամանյանի դիմանկարը» (1934), «Ավետիք Իսահակյանի դիմանկարը (1940), «Ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի դիմանկարը» (1943), «Ակադեմիկոս Ստեփան Մալխասյանի դիմանկարը» (1943), «Վիլյամ Սարոյանի դիմանկարը» (1960), «Իմ ընտանիքը» (1929), «Ինքնադիմանկար. Երեք հասակ» (1942), «Ինքնանկար» (1942) և այլն: 1961-ին «Իմ հայրենիքը» (1952–1958) նկարաշարի համար Սարյանն արժանանում է Լենինյան մրցանակի: 1907-ին մասնակցում է «Գոլուբայա ռոզա»-ի

և այլ ցուցահանդեսների՝ ներկայացնելով «Հեքիաթներ ու երազներ» ֆանտաստիկ պատկերների շարքը: 1924-ին մասնակցում է Վենետիկի Բիենալեի 14-րդ ցուցահանդեսին: 1928-ին Փարիզի «Ժիրար» սրահում բացվում է վարպետաց վարպետի անհատական ցուցահանդեսը: Ցուցահանդեսի նկարները հայրենիք տեղափոխող «Ֆրիժի» նավի վրա, սակայն, հրդեհ է բռնկվում՝ ճարակելով նկարների մեծ մասը: 1937-ին Փարիզում բացված համաշխարհային ցուցահանդեսի՝ ԽՍՀՄ-ի տաղավարի դեկորատիվ պաննոյի համար հայ գեղանկարիչն ստանում է Մեծ մրցանակ (Grand prix): Անհատական ցուցահանդեսներ են տեղի ունենում նաև Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Փարիզում, Երևանում և այլուր:


Արվեստի մարդը պետք է լինի տարբեր գեղարվեստական միջավայրերում, տեսնի աշխարհի տարբեր անկյուններում ստեղծված գեղեցիկի նմուշները, ասել է թե՛ պետք է ճամփորդի. ճամփորդել են Սուրենյանցը, Չարենցը, Իսահակյանը և այլք, հաճախ է ճամփորդել Սարյանը՝ Կոստանդնուպոլիս, Եգիպտոս, Պարսկաստան, և այդ ճամփորդությունները խթանիչ դեր են խաղացել նրա համար:

Սարյանը գտարյուն հայ էր, կրողը բարոյական բարձր արժեքների: 1915-ի Հայոց ցեղասպանության օրերին աշխատում է «Հայերին օգնող մոսկովյան կոմիտե»-ում: Մեկնում է Էջմիածին՝ յաթաղանից մի կերպ փրկված հայ զաղթականներին տեղում օգնություն ցույցաբերելու նպատակով:

Հ. Թումանյանի, Դ. Հովսեփյանի և հայ այլ մտավորականների հետ սաստկացող համաճարակի օրերին բոլոր ջանքերն ի գործ է դնում Արևելյան Հայաստանում ապաստանած արևմտահայերին մահվան ճիրաններից փրկելու համար: Անքուն գիշերներ, տեսածի ծանր տպավորություն. այս ամենը հոգեկան ցնցում է պատճառում զգայուն նկարչին, և Թումանյանի հանձնարարությամբ նրան տեղափոխում են Թիֆլիսի հիվանդանոց:

Մարտիրոս Սարյանը նաև հայ կերպարվեստի կյանքը կազմակերպողներից էր. 1916-ին Վ. Սուրենյանցի, Փ. Թերլեմեզյանի, Ե. Թադևոսյանի և այլոց հետ ստեղծում է Հայ արվեստագետների միությունը: 1919-ին Նոր Նախիջևանում հիմնում է գավառագիտական թանգարան: 1921-ին հաստատվելով մայր հայրենիքում՝ աջակցում է աշխարհի տարբեր ծագերից հայրենադարձված համազգի գիտնականներին, արվեստագետներին, գրողներին՝ բացվող դարաշրջանում հայ մշակույթի հունդը տարածելու, մշակույթի նոր արարչավայրեր ստեղծելու գործում: Եղել է նաև Հայաստանի պետական թանգարանի հիմնադիր-վարիչը, նպաստել Հայաստանի հնությունների ու գեղարվեստի պահպանման կոմիտեի (նախագահ), Հայաստանի կերպարվեստի աշխատողների միության, Երևանի գեղարվեստական ուսումնարանի կազմավորմանը: 1921-ին Հակոբ Կոջոյանի հետ ստեղծել է Խորհրդային Հայաստանի զինանշանը, ընտրվել Հայաստանի կերպարվեստի միության առաջին նախագահ: ➔ էջ 6

Եկեղեցին Փանոս Թերլեմեզյանի կտավներում



Փանոս Թերլեմեզյան. «Սանահինի վանքի գավիթը», 1904 թ.

← էջ 3

Այս տարիներին են ստեղծվել Արարատի, Արագածի, Սևանի, Ծաղկաձորի, Գեղարդի տեսարաններով երեք տասնյակից ավելի ճեպանկարները:

«Ծաղկաձորի վանքը» (1907) բնանկար է՝ Կեչառիսի վանական համալիրի կիսավեր շինությունների ճարտարապետական որոշակի մանրամասներով: Մյուսն ստացել է «Վանքի դուռ» (1907) անվանումը, որում պատկերված է Կեչառիսի վանքի Սբ. Գրիգոր եկեղեցու դուռը՝ շենին նստած կարմիր վերնաշապիկով ու սև տաբատով երիտասարդի պատկերով: Հետագայում փոխվել են նկարների անվանումները. առաջինը՝ «Կեչառիսի վանքը», երկրորդը՝ «Կեչառիսի վանքի Սբ. Գրիգոր եկեղեցու դուռը»:

Եկեղեցական թեմայով հայտնի կտավներից են նաև «Արարատը և Հռիփսիմե եկեղեցին», «Սևանա վանքը», «Խրիմյանը ժողովրդի մեջ» և այլն:

1908 թ. Թերլեմեզյանը ճանապարհորդում է Եգիպտոսում, Ալժիրում, Ֆրանսիայում: 1908—1910 թթ. ապրում և ստեղծագործում է Փարիզում, 1910—1915 թթ.՝ Պոլսում: Այստեղ կազմակերպում է իր առաջին անհատական ցուցահանդեսը (1913), ընկերանում Կոմիտասի, Դանիել Վարուժանի, Սիամանյոյի, Երվանդ Օսյանի և ուրիշների հետ:

Նկարչական գործին զուգահեռ՝ Պոլսում հավաքագրում է հայկական հին նկարչական նյութեր, որ հնարավոր լինի հետագայում վերականգնել հայկական նկարչության հին ոճը՝ առկա ձեռագրերում, խաչքարերի և քանդակների վրա:

1912 թ. ամռանը Փանոս Թերլեմեզյանը Կոմիտասի հետ ուղևորվում է նրա ծննդավայր՝ Քյոթահիա: Նրանք մեկուկես ամիս ապրել են այնտեղ՝ ամառառում՝ վրանի մեջ: Այդ օրերի տպավորությամբ 1913 թ. նկարիչը վրձնում է իր հանրահայտ ստեղծագործություններից մեկը՝ «Կոմիտաս Վարդապետ» կտավը (այժմ դիմանկարը կրում է «Երաժշտագետ Կոմիտասը» անվանումը): Կտավը 1925 թվականից Նյու Յորքի Հայ կրթական հիմնարկության մվիրաբերության շնորհիվ պահպանվում է Հայաստանի պետական պատկերասրահում: Կտավի տիրական առանձնահատկությունը անդորությունն է՝ և՛ Կոմիտասի ներաշխարհում, և՛ շուրջը՝ բնության տեսարանում:

Կոմիտասի կերպարը պատկերված է ազգագրական իրերի, հետմապատկերում գտնվող վրանի, սափորի, քամանչայի և հայկական զուռավոր, զարդանախշ ազգային գորգի համադրությամբ:

Կոմիտասը պատկերվել է նաև Թերլեմեզյանի ուրիշ կտավներում: Համառի նկատմամբ նկարչի հետաքրքրվածությունը արդյունք էր նաև նրանց ընկերության: Կոմիտասն ու Թերլեմեզյանը բնակվում էին Պոլսի Բանկալտի թաղամասում գտնվող մի տան մեջ: Այդ ընթացքում միասին այցելել են նաև կաթողիկոսների ամառանոց Բյուրական և եզդիների Ալյանլու գյուղ, որի ցեղապետը Կոմիտասի ճեմարանական

ընկերն էր: Բնության մեջ՝ աղբյուրի մոտ, Թերլեմեզյանը նկարում է Կոմիտասին և ցեղապետին: Կտավը, որ գնվել է նկարչի՝ Պոլսի ցուցահանդեսում, կոչվում էր «Կոմիտաս Վարդապետը և իր դասընկեր եզդիների ցեղապետը»:

Կոմիտասին նվիրված՝ Թերլեմեզյանի նկարներից են նաև «Կոմիտասը գրելիս» (1910—1912), «Կոմիտասը քնած» (1910—1912), «Կոմիտասը գետափին» (1911):

Փանոս Թերլեմեզյանի և Կոմիտասի վերջին հանդիպումը տեղի է ունեցել 1928 թվականին, երբ նկարիչն Ամերիկայից վերադառնում էր Հայաստան: Ճանապարհին նա կանգ է առել Փարիզում և շտապել հիվանդանոց՝ Կոմիտասին տեսության. «Երբ հիվանդանոց մտա, նրան գտա այգում պառկած, համզատանալիս, մտքերի մեջ խորասուզված, անտարբեր դեպի շրջապատը: Մազերը լիովին սպիտակել էին, գունատ էր, վտիտ, ձեռքերը ոսկրացած էին, թվում էր խիստ անօգնական՝ չկարողանալով հաղթահարել իր ներսում բուռն դրած


ահավոր հիվանդությունը: Գերագույն ճիգ գործ դրի՝ զսպելու հուզմունքս, որը պատրաստ էր փոխվելու հեկեկանքի: Մոտեցա, գրկեցի, համբուրեցի, նստեցի կողքին և մոտ կես ժամվա չափ զանազան հարցեր տվի, սակայն ոչ մի հարցիս չպատասխանեց:

Վաղեմի մտերիմիցս բաժանվեցի հուսաբեկ սրտով՝ զգալով, որ մի համճարեղ միտք հանդարտ ու անդառնալի կերպով մարում է»,— հիշում է նկարիչը (Գուրգեն Մահարին իր «Երգ մահու և անմահության» ստեղծագործության մեջ անդրադարձել է այս այցելությանը):

Վահրամ Ավագանն իր հուշագրության «Փանոս Թերլեմեզյան» մասում վկայում է, որ Թերլեմեզյանն ստեղծել է նաև մի այլ կտավ, որտեղ պատկերված էին ինքը՝ նկարիչը, Կոմիտասը, Սիամանյոն և Մաննիկ Պերպերյանը՝ Բոսֆորում մալով զբոսնելիս: Ըստ Ավագանի՝ եղիշե Չարենցը հրապուրված էր այդ նկարով, և Թերլեմեզյանն այն նվիրել է բանաստեղծին: Չարենցը նկարը կախել էր իր գրասենյակի պատից (1937 թ. բանաստեղծի գույքի բռնագրավման հետևանքով անհետացել է կտավը):

1914 թ. Թերլեմեզյանը Վան կատարած ստեղծագործական շրջագայության ընթացքում ստեղծում է «Սիփան սարը Կոուց կղզուց» և «Վանա լիճը» բնանկարները: Այցելում է Աղթամար կղզի՝ Վանա ծովի ծիծաղածավալ պատկերները նկարելու: Ցավոք, այդ օրերի նրա կտավները Վանի՝ 1915-ի գաղթի ժամանակ նույնպես անհետացել են:

Վանեցի Թերլեմեզյանն ապրիլյան հերոսամարտի օրերին, վրձինը գեներով փոխարինած, հերոսաբար կռվում էր Վանի պաշտպանության դիրքերում: Այդ օրերի Թերլեմեզյանի մասին Թեոդիկը «Ամենուն Տարեցոյցը» շարքում գրում է. «Կոմիտաս Վարդապետի անբաժան ընկերը՝ Թերլեմեզյան Փանոս, որ պատերազմէն առաջ Հայաստան անցած էր, բնատոհմիկ տեսարաններ ուսումնասիրելու համար, Արամի (Մանուկեան) պէս՝ կ'ըլլայ պարագլուխներէն Վանայ ինքնապաշտպանութեան գործին: Ահագանգը կը հնչէր, վտանգի մէջ էր հայրենիքը: Վասպուրական աշխարհի այդ աշխտժ գաւակը կը զգայ, որ երբեմնի հայդուկն արթնցած է իր մէջ, եւ նետելով վրձինը՝ փրկարար գործիքը ձեռք կ'առնէ»: Իր Փանոս Թերլեմեզյանի հիշողություններում Վանի հերոսամարտն այսպես է պատկերվել. «1915 թ.-ին վանեցիք երգելով կը կռուէին թուրք բանակին դէմ, բացարձակօրէն անհաւասար ուժերով: Կը կռուէին եղունգներով, ատրճանակներով, որսի հրացաններով, եւ կը դիմադրէին Կրուպի թնդա-մօթներուն, որովհետեւ հաւատքը իրենց կուրծքերէն պրօնգէ պատմէշներ կերտեց, եւ համերաշխ ու անձնուէր գործունէութիւնը յոյսի առաջնորդող ջահն եղաւ...»: Այգեստանում ծավալված մարտերին Թերլեմեզյանի մասնակցության մասին վկայություն կա նաև Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ» վեպի վերամշակված հրատարակությունում:



Փանոս Թերլեմեզյան, «Կոմիտաս Վարդապետ», 1913 թ.

Թերլեմեզյանը եղել է նաև հմուտ նշանառու և իր դիպուկ գնդակով ոչնչացրել է Նուրի փաշային: Նկարչի անվրեպ նշանառության ունակությունը դրսևորվեց նաև 1915 թ. Վանի հերոսամարտում: Նրա գիճակից Օմիկ Մխիթարյանը հիշում է.

«Փանոս Թերլեմեզյան ջղայնուտ կը մոտենայ դիրքին, մօտիկէն կը զննէ, կը ստուգէ թնդանօթի ծուխն ու վայրը, հետօ մէկ, երկու կարծակէ հրացանը եւ ետ կուղուի յուսալով, թէ սպանած է թուրք թնդանօթաձիգը: Դիրքը պարապ չի մնար: Հերթապահ զինուորը կանցնի Փանոսի տեղը եւ ակնդէտ կը հսկէ...»:

Փանոս Թերլեմեզյանը նաև Վանի Ջին-վորական մարմնի անդամ էր: Վանեցիների հետ հավասար կռվելով խրամատում՝ նկարիչն իր ներկայությամբ ոգևորում էր շարքային կռվողներին: Նույն թվականին գաղթականների հետ գալիս է Էջմիածին, այնտեղից՝ Թիֆլիս:

1920—1923 թվականներին Թերլեմեզյանը շրջագայում է Իտալիայում, Փարիզում, Պոլսում՝ ընդլայնելով ստեղծագործական աշխարհայացքը և ստեղծելով գերազանցապես ծովանկարներ:

Իտալիայում եղած ժամանակ՝ 1920 թվականին, ստեղծում է Էտյուդներ, որոնցից երկուսը առանձնաբար պատկերում են Ֆլորենցիայի Մայր տաճարն ու Սբ. Պետրոսի տաճարը: «Սանտա Մարիա դել Ֆիորե տաճարը. Ֆլորենցիա» նկարում մայրամուտի երկնքի կապույտ խորքի վրա պատկերված են Ֆլորենցիայի Մայր տաճարի պարսպի հատվածը, զմբեթն ու աշտարակը: Երկրորդ նկարում՝ «Մայրամուտ ծովի վրա. Նեապոլ», պատկերված է Հռոմի շատրվաններից մեկը, որտեղից երևում է Սբ. Պետրոսի տաճարը: Քաղաքային բնապատկերի ճշտված անվանումն է «Շատրվան Սբ. Պետրոսի տաճարի դիմաց. Հռոմ»:

1923—1928 թվականներին Թերլեմեզյանը բնակվում էր Ամերիկայում, կազմակերպում, անհատական ցուցահանդեսներ Նյու Յորքում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում, Լոս Անջելեսում: 1928 թ. Հայաստանի կառավարության հրավերով նա վերադառնում է Հայաստան՝ վերջնական բնակություն հաստատելով Երևանում: Պարբերաբար ստեղծագործական շրջայցեր էր կատարում Գորիսում, Ղափանում, Տաթևում, Ալավերդիում, Ձորագետում՝ ստեղծելով դիմանկարներ ու բնանկարներ: Ուշագրավ են Ակսել Բակունցի, Ավետիք Իսահակյանի, Ռոմանոս Մելիքյանի, Հրաչյա Աճառյանի և այլոց դիմանկարները:

Մահացել է 1941 թվականի ապրիլի 30-ին՝ Հայրենական պատերազմի ծանր օրերին, Երևանում: Դեռևս Նյու Յորքում 1924 թվականին՝ մահից 17 տարի առաջ, Փանոս Թերլեմեզյանը կտակ գրեց, որով իր ստեղծագործություններն ու ողջ ունեցվածքը մվիրաբերեց Հայաստանի պետական թանգարանին:

Հերմինե ՍԱՀԱԿՅԱՆ

Յակոբ Պատրիարք Նալեան. Մեղքերու մասին ընդհանրապես

Արդ, Փրկիչին աւետարանական խրատներէն ետք, թէւ պիտի խօսինք Սուրբ Եկեղեցւոյ եօթը խորհուրդներու մասին, հետևցնելով զանոնք որպէս Նոր Օրէնքի մոր խորհուրդներ, սակայն Եկեղեցւոյ խորհուրդները սկզբնական եւ ներգործական մեղքերուն դէղ ըլլալով, անհրաժեշտ եղաւ նախ խօսիլ հիւանդութեան ինչութեան մասին, որ է՝ մեղքը, եւ ապա սպեղանիներուն եւ դեղերուն մասին, որոնք Սուրբ Եկեղեցւոյ եօթը խորհուրդներն են:

ԽՆԴԻՐ Ա

Պէտք է գիտնալ, որ Աստուած ամէն ինչ չափով, կշիռով, սահմանով եւ կարգ-կանոնով ստեղծած է, որովհետև միայն Ինք՝ Աստուած, անչափ եւ անսահման է, իսկ մնացած բոլոր ստեղծուածները չափով, թիւով եւ կշիռով ստեղծուած են: Անոնք եթէ իրենց չափէն դուրս ելլեն, ապա Աստուծոյ արարչութեան հակառակ կ'ըլլան եւ իրենց բարիքէն կը զրկուին:

Ինչպէս հրեշտակները, որ իրենց չափը չճանչցան ու աստուածանալ կամեցան, փառքէն ինկան, նոյնպէս Ադամն ու Եւան կամեցան բարին ու չարը գիտնալ եւ անհուն գիտութեամբ Աստուծոյ նմանին, սակայն դրախտէն ինկան ու արտաքսուեցան: Հետևաբար՝ մեղքը բարիէն ու փառքէն զրկող է:

Տակաւին պէտք է գիտնալ, որ մեղքերը զանազան անուններ ունին՝ իրենց ներգործութիւններուն համաձայն: Նախ, կ'ըսուի չար, որ է բարիին պակասութիւնը. ինչպէս որ խաւարը լոյսի պակասութիւնն է, եւ տգիտութիւնը՝ իմաստութեան: Դարձեալ՝ չար կ'ըսուի մեղքը, քանի մարդուն, Աստուծոյ՝ անփոփոխ բարիէն ետ կը դարձնէ (կը հեռացնէ):

Երկրորդ՝ մեղք կ'ըսուի, որ է մարդուն դառնալը փոփոխական բարիին: Ինչպէս որ մարդ մը ձգելով կենդանութիւն տուող յստակ եւ պաղ ջուրը կ'երթայ ցեխտու եւ հոտած ջուրը կը խմէ. ինչպէս Աստուած հրեաներուն համար կ'ըսէր, թէ՝ ձգեցին զիս՝ կենդանի ջուրի աղբիւրը, եւ գացին իրենց համար ճեղքտուած գուբեր փորեցին:

Երրորդ՝ մեղադրութիւն կ'ըսուի, որովհետև մարդը անձնիշխան եւ Աստուծոյ պատկեր ըլլալով, անասունի գործ կը գործէ. ինչպէս ծեր եւ խելացի մարդ մը՝ փոքրիկ երեխայի մը պէս կը խօսի ու կը խաղայ, եւ զայն տեսնողները կը մեղադրեն զինք, թէ իրեն հասնող, իրեն վայելող բանէն ետ կը կենայ ու զանց կ'ընէ:

Չորրորդ՝ արատ կ'ըսուի, որովհետև մեղքը կ'արատաւորէ եւ կ'ապականէ Աստուծոյ պատկերը, որ մեր հոգին է, եւ [մարդուն] բժատը կ'ընէ: Քանի որ մեղքը բանականութիւնը կը մոլորեցնէ ճշմարտութենէն, ցասմանական կը տկարացնէ գորութենէն եւ ցանկականը կը առնեցնէ բարիի սէրէն, իսկ յիշողականը մոռացկոտ կը դարձնէ Աստուծոյ երկիւղէն, դժոխքէն եւ Արքայութեան սէրէն: Խղճմտամբը ցեցակեր եւ որդմակեր կ'ընէ, որով մեղանշողը չի կրնար ուրախանալ չմեղանշողի մը նման, ինչպէս Կայէնը, որ Աբելին սպաննեց, ապա աշխարհի վրայ երերալով եւ տատանելով կը շրջէր:

Չարէն, մեղքերէն դուն հեռու եղիր, որպէսզի չըլլաս մեղադրելի: Հոգին բարիքներով կը զարդարուի, ինչպէս պարտէզ մը ծաղկալի:

ԽՆԴԻՐ Բ

Ինչ է մեղքը՝ ըստ սահմանումի

Մեղքը այն է, որ մարդը կը հեռանայ անփոփոխ բարիէն, որ է Աստուած, եւ կը դառնայ դեպի փոփոխական բարին, որ է ժամանակաւոր հեշտութիւնը:

→ էջ 8

Յակոբ Պատրիարք Նալեան. Մեղքերու մասին ընդհանրապէս

← էջ 5

Աստուած ամէն բան մարդուն համար ստեղծած է, իսկ մարդը՝ Իրեն համար, որպէսզի [մարդը] ճանցնայ իր ստեղծողը. ճանցնալով՝ սիրէ, սիրելով՝ երթայ եւ միաւորուի Անոր՝ միտքով եւ կամքով։ Սակայն եթէ մարդը իր ստեղծողը չսիրէ, որ իր կեանքի հոգին է, այլ աշխարհը սիրէ եւ հաճոյքի ու զուարճութեան անձնատուր ըլլալ՝ կարծելով, որ իր մնայուն բարին աշխարհի հեշտութիւնն է, այդպիսին զԱստուած՝ անփոփոխ բարին, սատանային հետ կը փոխարինէ։

Դարձեալ՝ մեղքը խորիի, խօսիլ եւ գործել է այն, ինչ որ Աստուած եւ օրէնքը կ'արգիլեն։ Որովհետեւ մեղքը կամ միտքով կը խորիուի եւ կը կոչուի խորիուորդի մեղք. կամ բերանով կը խօսուի եւ կը կոչուի բերանի մեղք. եւ կամ գործով կը կատարուի եւ կը կոչուի գործի մեղք։ Աստուած կ'արգիլէ միտքի մեղքը, ինչպէս Սուրբ Աւետարանին մէջ ըսաւ, թէ ինչ չարիք կը խորիիք ձեր սիրտերուն մէջ։ Նաեւ բերանի մեղքը, ինչպէս Սուրբ Յակոբոս կ'ըսէ, թէ ով որ խօսքով չի՝ մեղանչեր, ան է կատարեալ մարդ։ Նաեւ գործի մեղքը, ինչպէս Աստուած կ'ըսէ. մի շնար, մի գողնար, մի սպաններ։

Տակաւին, Աստուծոյ տասը պատուիրանները այս երեք [տեսակի] մեղքերն ալ կ'արգիլեն։ Միտքի մեղքերուն դէմ կ'ըսէ, թէ՛ պիտի սիրես քու Տէր Աստուածդ ամբողջ սիրտովդ։ Բերանի մեղքերուն դէմ, կ'ըսէ, թէ՛ սուտ երդում մի՛ ըներ եւ քու Աստուծոյդ անունը պարապ տեղը բերանդ մի՛ առներ, եւ սուտ վկայութիւն մի՛ տուր։ Իսկ գործի մեղքերուն դէմ կ'ըսէ, թէ՛ կուռքերուն երկրպագութիւն մի՛ ըներ, մի՛ շնար, մի՛ գողնար, մի՛ սպաններ։

Դարձեալ՝ մեղքն է որ մարդս

վնասապարտ եւ պատժապարտ կ'ընէ։ Վնասը այն է, որ կը գրկէ աստուածատեւութենէն, իսկ պատիժը՝ յաւիտեանական տանջանքը դժոխքին մէջ։

Մեղքը դարձումն է Աստուծմէ,

որ բարի եւ անփոփոխ է։

Որ մարդուն հոգին

անյոյս խաւար եւ դժոխք կ'ընէ։

ԽՆԴԻՐ Գ

Սկզբնական մեղքի մասին

Սկզբնական մեղքը Ադամին անհնազանդութիւնն է, որ սերունդէ սերունդ կը փոխանցուի եւ մարդուն բարկութեան որդի կ'ընէ, ատելի Աստուծոյ եւ գերի՝ սատանային։ Որովհետեւ, Ադամ երբ ստեղծուեցաւ ու դրախտին մէջ դրուեցաւ, եւ եւան ան անոր կողէն շինուեցաւ՝ Աստուծոյ ձեռքով, Աստուած անոնց մէկ զգուշացուն ըրաւ, թէ՛ դրախտի բոլոր ծառերէն կերէք, միայն բարիի եւ չարի գիտութեան ծառէն մի՛ ուտէք. քանի որ եթէ ուտէք, հոգիով կը մեռնիք։ Սակայն եւան եւ Ադամը Աստուծոյ անհնազանդ գտնուեցան եւ օձազգեցող չար սատանային հնազանդեցան ու կերան եւ Աստուծոյ բարեկամ ու սիրելի ըլլալէն՝ դարձան թշնամի եւ ատելի, ինչպէս կ'ըսէ Պօղոս առաքեալը, թէ՛ մինչ տակաւին թշնամի էինք, Աստուծոյ հետ հաշտուեցանք Անոր Որդիին մահուամբ։

Տակաւին ազատ էինք, սակայն գերի եղանք՝ հնազանդելով սատանայի կամքին. ինչպէս կ'ըսէ Սուրբ Պօղոսը, թէ՛ ծառայ էք անոր որով կը հնազանդիք։ Իսկ Քրիստոս կ'ըսէ. ով որ մեղք կը գործէ, ծառայ է մեղքին։ Ոմանք կ'ըսեն, թէ սկզբնական մեղքը հպարտութիւնն էր, իսկ ոմանք ալ՝ բղջախո-

տութիւնը։ Կ'ըսենք, թէ՛ թէեւ հպարտութիւնը բոլոր մեղքերուն մայրն է, քանի որ անոր պատճառով իրեշտակները երկինքէն ինկան, եւ [հպարտութիւնը] բոլոր մեղքերուն սկիզբը ըլլալով՝ մայր կ'ըսուի, բայց Ադամին քաշողն ու զլորողը հպարտութիւնն ու բղջախոտութիւնը չեղան, այլ՝ անհնազանդութիւնը, որ հպարտութենէն առաջ եկաւ. որովհետեւ իւրաքանչիւր անհնազանդ հպարտ է։

Այդ պատճառով, Աստուած Ադամին յանդիմանած ատեն չըսաւ անոր, թէ հպարտացար, այլ՝ թէ լսեցիր կնոջդ ձայնը, որով կ'ուզէ ըսել, թէ՛ ոչ թէ Ինծի հնազանդեցար, այլ կնոջդ։ Տակաւին, եթէ հպարտութիւնն ու բղջախոտութիւնը ըլլային սկզբնական մեղքը, անհաւատներուն մէջ երբեք խոնարհ եւ ողջախոհ մարդ պիտի չգտնուէր. սակայն անհաւատները, որ չեն մկրտուած, անոնց մէջ շատեր կան, որ խոնարհ եւ ողջախոհ են, բայց անհնազանդութեամբ՝ բարկութեան որդիներ են՝ գերի սատանային ու ատելի՝ Աստուծոյ։ Իսկ եթէ հարցնես, թէ մկրտուած մարդը, որ սրբուած է սկզբնական մեղքէն, ինչպէս կ'ըլլայ, որ անոր ծնած զաւակը անմաքուր եւ մեղքով կը ծնի. կ'ըսեն, թէ ինչպէս որ մարդ մը, որ կոյր է, իր ծնած զաւակը ոչ թէ կոյր կը ծնի, այլ՝ աչքերով, իսկ երբեմն ալ հայրը տեսնող, իսկ զաւակը կոյր կը ծնի։ Այսպէս՝ թէեւ զաւակին հայրն ու մայրը մկրտուած ըլլան ու սրբուած մեղքէն, սակայն իրենց ծնած զաւակը մեղքով կը ծնին։ Դարձեալ՝ ինչպէս բարի ծնողներն իր չար զաւակ կը ծնի, այդպէս ալ սրբուած (մաքրուած) ծնողներէն՝ անմաքուր զաւակ։ Ինչպէս որ Մանասէ թագաւորը կռապաշտ եղաւ, գերուեցաւ, գերութեան մէջ եղած

ատեն զղջաց, եւ Աստուած վերադարձուց զինք գերութենէն. Սուրբ Երուսաղէմ եկաւ եւ մինչև իր մահը աստուածապաշտութեամբ ապրեցաւ. սակայն իր կռապաշտութեան պատիժն ու պատուհասը մնաց սերունդէ սերունդ, ինչպէս գրուած է Դ. Թագաւորաց 23-րդ գլուխին 26-րդ համարին մէջ։ Այսպէս ալ, թէեւ ծնողները մկրտութեամբ կը սրբուին սկզբնական մեղքէն, բայց ծնած զաւակը Ադամի մեղքով անմաքուր կը ծնի, որովհետեւ բոլորն ալ իրենց արմատը Ադամէն ունին. ազոխը ան կերաւ, սակայն իր որդիներուն ատամները առին համը, քանի որ մեր կամքը Ադամի կամքին մէջ կար, իսկ Ադամին կամքը՝ հասարակ կամք էր անորմէ ծնած բոլոր զաւակներուն համար։

Այդ պատճառով, մեր կամքը անոր մէջ ըլլալով, անոր կամքին ապականութեամբ՝ մեր կամքը եւս ապականեցաւ, թէեւ ան զղջաց ու ապաշխարեց, բայց մեն անոր հիւանդութեամբ հիւանդացանք. սակայն անոր ապաշխարութեամբ չսրբուեցանք։

Ինչպէս ըսեն. մարդ մը, որ ջերմէ պառկած ըլլայ կամ ժանտամաւ, եւ ամողջ մէկը անոր այցելութեան գացած ատեն վարակուի. երբ առաջին պառկողը Աստուծով առողջանայ, ետքէն վարակուած մարդը կ'առողջանայ մը. կարելի բան չէ։ Այսպէս ալ, Ադամ ապաշխարեց եւ Քրիստոս ազատեց զինք դժոխքէն ու սկզբնական մեղքէն Իր անհուն ողորմութեամբ. [սակայն] միթէ՛ անոր սերունդները ազատեցան այդ մեղքէն, որ Ադամի մէջ էր. չազատեցան, այլ անմաքուր մնաւին. [բայց] կը սրբուին Քրիստոսի չարչարնքներուն շնորհիւ՝ Քրիստոսի մկրտութեան միջոցաւ։

Տակաւին, ինչպէս ըսեն, Գէեզին՝

Եղիսէ մարգարէին աշակերտը, զնաց եւ Նէեմանէն գաղտնի կերպով կաշառք առաւ։ Եղիսէ մարգարէն գիտցաւ. անիծեց Գէեզին ու ըսաւ, թէ՛ Նէեմանի բորոտութիւնը քու վրադ եւ սերունդներուդ վրայ թող գայ, յաւիտեան։ Կ'ըսեն, թէ Աստուած Գէեզին թերեւս ողորմեցաւ եւ մաքրեց զինք իր բորոտութենէն. բայց անոր սերունդները անոր մաքրուելով, մաքրուեցան. ոչ։ Արդ, Ադամին մեղքը՝ բորոտութիւն մըն էր, որ անոր բոլոր սերունդներուն տիրապետեց։ Ադամը Քրիստոսի շնորհքով եւ իր ապաշխարութեամբ մաքրուեցաւ։ Եթէ մէկը ըսէ, թէ՛ հայրս մաքրուեցաւ, ես չեմ մկրտուիր՝ ես ալ մաքրուեցայ. ինչպէ՛ս կը մաքրուի առանց մկրտութեան. կարելի բան չէ. այլ պէտք է, որ ինքն ալ մկրտուի, որպէսզի մաքրուի։

Նախնիին մեղքով որ բորոտիս,

արմատէն կ'ապականիս.

Փրկիչին շնորհքով դուն կ'ազատիս,

եթէ Ասազանին մէջ մկրտուիս։

Շարունակելի

«Քրիստոնէական ուսանելի», 1806

Աշխարհաբարի վերածեց Վարանդ (Յակոբ) ՔՐԻՍՏՈՆՅԱՆԸ

ՏՈՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՊՐԻԼ
† Ս. Գրիգոր Լուսավորչի սուկալի չարչարանքների և Վիրապ մտնելու տոն — <i>5 ապրիլի</i>
† Բռնադատված եկեղեցականների հիշատակության օր — <i>6 ապրիլի</i>
† Ավետումն Ս. Աստվածածնի — <i>7 ապրիլի</i>
† Ծաղկազարդ — <i>13 ապրիլի</i>
† Տ. Հարության տոն (Չատիկ) — <i>20 ապրիլի</i>
† Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակության օր — <i>24 ապրիլի</i>

ՔՐԻՍՏՈՆՅԱՂ ԶԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
 Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
 Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
 Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
 Գրանցման վկայական՝ 624
 Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
 Հեռախոս՝ (010) 517 280
 Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
 qristhay@etchmiadz.in.am
 web կայք՝ krishayas.wordpress.com
 etchmiadzinlibrary.am/en/
 kristonya-hayastan
 Ստոր. տպագր. 2.04.2025 թ.
 Տպաքանակը՝ 1265

← էջ 2, 4

- Ազգորիթմների կարգավորում՝ ըստ սեփական նախասիրությունների։
- Տարատեսակ խմբեր, վիրտուալ համայնքներ։
- Բաց և ազատ տիրույթ՝ սեփական գաղափարները հաղորդելու համար։
- Առցանց հոգևոր քարոզչության լայն դաշտ։

Սոցիալական գրեթե բոլոր ցանցերն ունեն հետևյալ ընդհանուր սկզբունքը՝ ինչ շատ դիտես, այն ավելի շատ քեզ կցուցադրվի։ Ծրագրային մեղքորիթմներն աշխատում են հնարավորինս շատ օգտատերերին պահել իրենց ուշադրության կենտրոնում և այդ պատճառով անում են առավելագույնը, որ մեզ հաճելի լինի։ Դա կարելի է հօգուտ մեզ օգտագործել՝ հրամցվող նյութերը կարգավորելով այնպես, որ այնտեղ գերակշռեն իրավական, հոգևոր և առհասարակ դրական ուղղվածության տեսանյութերը, տեքստերը և լուսանկարները։ Սա մեզ կօգնի զերծ մնալ ոչ պիտանի նյութերի սպառման վրա ժամանակ և էներգիա կորցնելուց։ Չէ՞ որ այն մեկ-երկու ժամն անգամ (երբեմն՝ ավելի շատ), որ անցկացնում ենք համացանցի մեջ, կարող ենք պասիվ կերպով մեզ անհրաժեշտ ուսուցողական նյութերի վրա ծախսել։

Սոցցանցերի կարևոր այլ առավելություն են թեմատիկ խմբերը։ Ունեն հետաքրքրություն, ենթադրենք, ֆիլմերի հետ կապված. կա-

րող ես միանալ այդ ուղղվածությամբ բազում խմբերից մեկին և ավելի խորացնել գիտելիքներդ տվյալ ոլորտում, ծավալել քննարկումներ, ճանաչել միևնույն ճաշակի ու նախասիրությունների տեր մոր մարդկանց։ Եթե ընթերցասեր ես, հրաշալի հնարավորություն են գրական խմբերը, և այդպես շարունակ։

Ազգորիթմների կարգավորման ու խմբերի միջոցով մեր էջի բովանդակությունն ավելի է զտվում, և որոշ ժամանակ անց տեսնում ենք, որ սոցցանցերի բովանդակությունը մեզ իրապես հետաքրքրող ու կարևոր տեղեկատվությամբ է լցվում։ Սակայն չպետք է մոռանալ, որ սոցցանցերը ոչ միայն տեղեկատվության սպառման, այլև տեղեկատվություն փոխանակելու համար են նախատեսված։ Եթե ունեք գաղափարներ, մտքեր, կարծիքներ, որոնց մասին հաճախ առիթ չի լինում պատմել ընկերներին, ծանոթներին, կարող եք արտահայտել սոցցանցերում։ Ո՛վ գիտե, միգուցե այդ բազմահազարանոց լսարանում գտնվեն մարդիկ, որոնց քո իսկ առաջարկած տեղեկատվությունն օգտակար կլինի։ Սեփական մտքերը բարձրաձայնելը նաև զարգացնում է ունակություններ՝ հաղորդակցվելու առցանց տիրույթում, լսելու կարծիքներ մեր մասին, ինչո՞ւ ոչ, բախվելու առողջ քննադատության և, միգուցե, վերանայման ենթարկելու մեր հայացքներն այս կամ այն հարցի նկատմամբ։

Դաշտն ազատ է և հավասար բոլորի համար։ Սոցցանցերի բացասական բովանդակության դեմ բողոքելն անիմաստ կռիվ է հողմաղացների դեմ, բայց այդ բովանդակության մեջ սեփականը, դրականն ավելացնելն է, որ կարող է բարի պտուղներ տալ։ Ինչպես ասում են՝ «Ինչ ցանես, այն էլ կինձես»։

Քրիստոնյայի համար առավել ևս սոցցանցերը դաշտ են տրամադրում՝ զբաղվելու Ավետարանի քարոզչությամբ։ Եթե ունեք տեսանյութեր նկարահանելու հմտություն, կարող եք գրավիչ տեսագրություններով դա անել։ Եթե ունեք գրելու ձիրք ու ցանկություն, տեքստային ձևաչափն է նախընտրելի։ Ի վերջո, կարող եք տարածել արդեն իսկ առկա բովանդակությունը՝ հասանելի դարձնելով ավելի լայն լսարանների։ Կարևորը Քրիստոսի պատգամին հավատարիմ մնալու ցանկությունն է. «*Գնացե՛ք ամբողջ աշխարհով մեկ և քարոզեցե՛ք Ավետարանը բոլոր մարդկանց*» (Մարկ. 16:15)։ Ուրախալի փաստն այն է, որ արդեն իսկ հաջողված մնան բազում օրինակներ մեր աչքի առջև կան։ Շատ հոգևորականներ, աշխարհական հավատացյալներ և հոգևոր գործունեությամբ ակտիվ երիտասարդներ ունեն բազմահազարանոց լսարաններ, որտեղ ամեն օր վարում են հոգեշահ բովանդակությամբ զրույցներ։ Պատկերացնո՞ւմ եք՝ ամեն օր հազարիցավաճող լսարանի առջև ելույթ ունենալ։ Իրական կյանքում դա չափազանց բարդ է, դրա հա-

Սոնա ՔԵՇԻՇՅԱՆ
Էդվարդ սրկ. ՔԵՇԻՇՅԱՆ